Զոդի լեռնանցքի տակ, մի հարթության վրա, մնում են պատերը մի քարավանատան, որն ըստ շինարարական տեխնիկայի կարող է VII դարի կառուցում համարվել: Կրասնոսելսկ-Փառիսոս հատվածի վրա, Բաշքենդ գյուղի սահմանում, համփի եզրին կանգնած է մի մեծ խաչքար-հանապարհախաչ՝ առանց արձանագրության:

Սևանի ավազանում պահպանված կանգուն և կիսավեր նարտարապետական հուշարձանները խիստ մեծ թիվ են կազմում և թվագրվում են սկսած VII դարից մինչև XX դարը, իսկ մանր հուշարձանների՝ խաչքարերի և տապանաքարերի առատությամբ՝ մրցակից չունեն: Այդ մանր հուշարձանները իրենց արձանագրություններով և զարդաքանդակներով մեծ արժեք ունեն նաև քանդակագործական արվեստի, քանդակող վարպետների անունների հայտնաբերման և ազգագրության ու կենցաղային երևույթների ուսումնասիրության համար:

Միջնադարյան հուշարձանների առատությամբ էլ, բնականաբար, բացատրվում է արձանագրությունների շատությունը: Ներկա պրակում հիշատակված շրջաններից հավաքված և ամփոփված են 1547 արձանագրություն, որոնցից նախկինում միայն 248-ն են եղել հրատարակված:

Պրակում տեղ չեն գտել Սևանի կղզու հուշարձանների վրա եղած արձանագրությունները, նախ, որ տեղում այժմ շատ քիչ են պահպանվել. ապա՝ պրակը ծավալուն է ստացվել. դրանք կզետեղվեն հաջորդ պրակում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շանխաթունեանց—Յով. *եպս., Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հին դաւառացն Արարատայ, հատոր երկրորդ, 1842 թ., էջմիածին։*
2. Ջալալեանց—Սարգիս *արքեպիսկոպոս. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., 1858, Տիֆխիս։*
3. Ալիշան—Ղևոնդ, *Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, 1893, Վենետիկ։*
4. Սմբատեանց—Մեսրովբ *արքեպիսկոպոս, տեղեկագիր Գեղարքունի Նովազարդ դաւառի, 1895 էջմիածին։*
5. Լալայան—Երվանդ, *Ազգագրական հանդես, XVIII, XIX։*

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

— Գծիկով նշանակված են բնագրի մեջ (գծագրության) համապատասխան քանակի շարդված գրերը։

. . . Կետերով նշանակված են բնագրի մեջ (գծագրության) շարդված գրերն անկախ քանակից։

[ ] Փակագծով նշանակված են շարդված գրերի վերականգնումները (վերծանության մեջ)։

( ) Փակագծով նշանակված են գրչի բաց թողած կամ առանց պատվի նշանի գրած սղումները (վերծանության մեջ)։

[] Փակագծով նշանակված են բնագրի մեջ դրված ավելորդ գրերը (վերածնության մեջ)։

/ Գծիկով նշանակված են բնագրի տողերի սահմանները (վերծանության մեջ)։

Լուսանկարների տակ դրված երկու թվանշաններից առաջինը՝ ձախ անկյանը, լուսանկարի հերթական համարն է, որը և դրված է նաև բնագրում, յուրաքանչյուր արձանագրության վերջում. իսկ երկրորդը արձանագրությունների հերթական համարն է, որը դրված է բնագրում՝ յուրաքանչյուր արձանագրության սկզբում։